



Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ԵՐԵՎԱՆԻ, 22 ՄԱՐՏԻ 2016Թ.
№ 8 (384)

2 - Է « 3 i ÛáóÃÙáóÝÝ
3 Ûë 3 ÛÝÛ - Կ
3 ÛÝÛ - Կ ; Í 3 ÝáÃ...
° ÕÆ° á² Õ° Ûò



Խոշորացված համայնքը՝ բազում խնդիրներով

Փետրվարի 14-ին Տաթև Գորակազմ համայնքում կայացած ՏԻՄ ընտրության արդյունքներով մինչ այդ Տաթևի գյուղապետ Մուրադ Սիմոնյանն ընտրվեց (1236 ձայն) Տաթև համայնքի ղեկավար: Նորընտիր ղեկավարը, խոսելով ընտրություններից, նշեց, որ անցել են թափանցիկ, «բոլորիս ցանկությունն էր առանց կոնֆլիկտի ու մաքուր ընտրություն անցկացնելը»:

Մուրադ Սիմոնյանի համոզմամբ՝ ընտրության արդյունքները գոհացուցիչ են, ժողովուրդն իր կամքով ընտրել է համայնքի ղեկավար: «Շինուհայրից երկու թեկնածու էր առաջադրվել, եւ ինձ համար ամենեւին էլ զարմանալի չէ, որ այդ գյուղից ես քիչ ձայն եմ հավաքել: Սա բնական երեւոյթ է. գյուղում մարդիկ իրար հետ կապված են բարեկամական, խնամհական կապերով: Շինուհայրիցների համար ես անձանոթ մարդ չեմ», - նշեց համայնքի ղեկավարը:

Նոր համայնքի աշխատակազմն արդեն ձեւավորվել է, որ նախկինից շատ քիչ է տարբերվում: Աշխատատեղերի կրճատման հետ կապված մտահոգությունը, որ մինչ համայնքների խոշորացումը կար, իրականություն չի դարձել: Նախատեսված է ունենալ յոթ համայնքային ծառայող, ավագանու երկրորդ միստում հաստիքացուցակը հաստատվել է եւ ուղարկվել կառավարություն՝ հաստատման: Աշխատատեղերի կրճատում առանձին համայնքներում գրեթե չի կատարվել, արդեն հստակեցվել է յուրաքանչյուր գյուղում աշխատողների թիվը, մասնավորապես՝ Շինուհայրում՝ 20 հոգի, Տաթևում՝ 6, Խոտում՝ 6, Հարժիսում՝ 6, Հալիձորում՝ 6, Սվարանցում՝ 5, Տանձատափում՝ 4, Քաշունիում՝ 2:

«Որոշ տեղերում կրճատել ենք մեկ օժանդակ բանվոր կամ պահակ, կամ էլ երկու բանվորից մեկին: Օրինակ՝ Տաթևում կրճատել են մշակույթի տան գեղմասվարի հաստիքը, քանի որ ավելորդ էր», - պարզաբանեց Մ.Սիմոնյանը:

Ինչպես նախատեսվել էր, համայնքի կազմի մեջ մտնող գյուղերի (բացի Շինուհայրից) ընթացիկ հարցերով զբաղվելու է լիազոր ներկայացուցիչը, որին նշանակում է համայնքի ղեկավարը՝ բնակիչների կարծիքը հաշվի առնելով: Համայնքապետի տեղակացմամբ՝ լիազոր ներկայացուցիչ առաջադրել են նախկին համայնքի ղեկավարներին, բայց եթե ժողովուրդը կողմ չլինի եւ առաջադրի իր թեկնածուին, հաշվի է առնվելու նրա կարծիքը: Լիազոր ներկայացուցիչը պարտավոր է համայնքի ընթացիկ հարցերը լուծել, խնդիրները ներկայացնել համայնքի ղեկավարին, հետամուտ լինել համայնքապետի կատարմանը, հարկերի հավաքմանը եւ այլն: Այն մտավախությունները, որ մեկ փաստաթուղթ ձեռք բերելու համար մարդը պիտի գնա Շինուհայր, նույնպես իրականություն չի դարձել: Տեղում աշխատող օպերատորներն այդ հարցը կլուծեն:

Կենտրոնական ապարատը կազմված կլինի համայնքի ղեկավարից, տեղակալից, աշխատակազմի քարտուղարից, առաջատար

Մեղրու ոռոգման ինքնահոս համակարգի առաջին փուլը պատրաստ է գործարկման

à é á . Û³ Ý Ñ³ Û³ Í³ ñ.

Գարնան-գյուղատնտեսական աշխատանքներին զուգահեռ առաջին փուլում մշակույթի հողատարածությունների ոռոգումը: Չորային կլիմա ունեցող Մեղրիում ոռոգման տարեշրջանը մարզի մյուս տարածաշրջանների համեմատ վաղ է սկսվում: Բնականաբար, դրան «Մեղրի» ջրօգտագործողների ընկերությունը (ՋՕԸ) համեմատաբար շուտ է ձեռնարկում լինում: Ընկերությունը, որ հիմնադրվել է տասներկու տարի առաջ, սպասարկում է երկու քաղաք (Մեղրի, Ագարակ), երեք գյուղ (Շվանիձոր, Ալվանք, Նոնաձոր), առանձին միավոր է

«Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամի Մեղրու մասնաճյուղը (ընդհանուր առմամբ 470 հա հողատարածություն): Համեմատության համար նշենք, որ խորհրդային տարիներին Մեղրու ոռոգման եւ ջրար-

ընտրության արդյունքները գոհացուցիչ են, ժողովուրդն իր կամքով ընտրել է համայնքի ղեկավար: «Շինուհայրից երկու թեկնածու էր առաջադրվել, եւ ինձ համար ամենեւին էլ զարմանալի չէ, որ այդ գյուղից ես քիչ ձայն եմ հավաքել: Սա բնական երեւոյթ է. գյուղում մարդիկ իրար հետ կապված են բարեկամական, խնամհական կապերով: Շինուհայրիցների համար ես անձանոթ մարդ չեմ», - նշեց համայնքի ղեկավարը:

էջ 5

Ընտրական օրենսգրքի շուրջ չփարափված որեւէ կասկած չպետք է անդադրվի

Ճ³ Û³ óú èlláóÝÇúĆó

2016թ. հունիսի 1-ին արդեն պիտի ունենանք հանրապետության նորոգված սահմանադրությանը համապատասխանեցված Ընտրական օրենսգրքը:


Երկրի համար առանցքային նշանակություն ունեցող այդ փաստաթղթի շուրջ այս օրերին տեղի են ունենում քաղաքական քննարկումներ եւ բանավեճեր:

Եվ այդ գործընթացները, կարծեք, անտարբեր չեն թողել հանրապետության՝ շատ թե քիչ գիտակից որեւէ քաղաքացու. իշխում է այն պարզ մտայնությունը, որ Ընտրական օրենսգրքը ամեն մի քաղաքացու վաղվա օրվան, Հայաստանի Հանրապետության ճակատագրին (առանց չափազանցության)

առնչվող հարց է: Այնպես որ՝ Ընտրական օրենսգրքի շուրջ պայքարը սոսկ ընդդիմության եւ իշխանության միջեւ հերթական կռիվնեմը չէ եւ ոչ էլ կռվախարույց հերթական հարցը, մանավանդ որ մերօրյա Հայաստանում եւ իշխանություն, եւ ընդդիմություն հասկացություններն այնքան էլ դյուրըմբռնելի չեն ու հստակ, կայուն ջրբաժան չունեն:

Խնդիրն ավելի մասշտաբային ու ընդգրկուն է եւ, կրկնում ենք, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացուն վերաբերող:

Ո՞րն է գլխավորը ստեղծված իրավիճակում: Քաղաքականությունից, օրենքների մշակումից շատ հեռու մարդկանց մեջ անգամ տարիներ շարունակ ձեւավորվել է կասկածելի հարցերի մի փունջ, որը պետք է լիովին



փարատել: Ի վերջո այս գործընթացում չկա ավելի վեհ գաղափար կամ սկզբունք, որքան ընտրողների (մարդկանց) հավատն է, ընտրական գործընթացի հանդեպ վստահությունը: Որո՞նք են, ուրեմն, հարցերը, որոնց լու-

էջ 2

էջ 3

ԱՐՏՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆ. «Միայն լսարանում դասապրոցես կազմակերպելով համալսարանական միջավայր չես ստեղծի»

Հոգիսի պետական համալսարանում տիրող իրավիճակի, առկա խնդիրների, դրանց լուծման ուղիների և առաջիկա անելիքների մասին է գրույցը

Գորիսի պետական համալսարանում տիրող իրավիճակի, առկա խնդիրների, դրանց լուծման ուղիների և առաջիկա անելիքների մասին է գրույցը
ԳՊՀ ղեկավարի նորանշանակ պաշտոնակատար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտուշ Ղուկասյանի հետ:

– Պարոն Ղուկասյան, փետրվարի 11-ից նշանակվել եք Գորիսի պետական համալսարանի ղեկավարի պաշտոնակատար: Հասցրե՞լ եք ծանոթանալ համալսարանում տիրող իրավիճակին, խնդիրներին, հարմարվել նոր միջավայրին:
– Լինելով Գորիսի պետական համալսարանի կառավարման խորհրդի անդամ, ինչպես նաև Խ.Արուսյանի անվան մանկավարժական համալսարանի ղեկավար՝ երկար տարիներ համագործակցել եմ համալսարանի հետ: Մեզ միավորել են միևնույն խնդիրները, որոնց լուծման համար տարբեր միջոցառումներ ենք ձեռնարկել: Այնպես որ այս գիտական, մանկավարժական միջավայրն ինչոր առումով ինձ ծանոթ է. կան մասնագետներ, որոնց հետ համատեղ աշխատել եմ: Ներկայումս բախտ է վիճակվել ղեկավարել կարգավիճակով լինել համալսարանում, հասցրել եմ նորություններ հայտնաբերել, ավելի խորությամբ ուսումնասիրել խնդիրները, ծանոթանալ բուհի կառուցվածքին, կյանքին, մասնագիտական կարողություններին: Կարելի է ասել, այստեղ բավականին հետաքրքիր

մալսարանի կառավարման խորհրդի անդամ, ինչպես նաև Խ.Արուսյանի անվան մանկավարժական համալսարանի ղեկավար՝ երկար տարիներ համագործակցել եմ համալսարանի հետ: Մեզ միավորել են միևնույն խնդիրները, որոնց լուծման համար տարբեր միջոցառումներ ենք ձեռնարկել: Այնպես որ այս գիտական, մանկավարժական միջավայրն ինչոր առումով ինձ ծանոթ է. կան մասնագետներ, որոնց հետ համատեղ աշխատել եմ: Ներկայումս բախտ է վիճակվել ղեկավարել կարգավիճակով լինել համալսարանում, հասցրել եմ նորություններ հայտնաբերել, ավելի խորությամբ ուսումնասիրել խնդիրները, ծանոթանալ բուհի կառուցվածքին, կյանքին, մասնագիտական կարողություններին: Կարելի է ասել, այստեղ բավականին հետաքրքիր

ՍՄՏԵՍՆ

Ծնվել է 1958թ. հուլիսի 30-ին Ստեփանակերտում: Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի Մեծ Շեն գյուղում և Մարտակերտում: 1975թ. ընդունվել է ԵՊՀ մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժին, 1980թ.՝ ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի ասպիրանտուրան և գործուղվել ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտ (Մոսկվա): 1984թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1984-1988թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում ավագ գիտաշխատող, 1988-ից՝ ԵՊՀ մեխանիկայի ֆակուլտետի տեսական մեխանիկայի ամբիոնում: 1994-2002թթ. եղել է նույն ամբիոնի վարիչ: 1997թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1996թ. Մոսկվայի ԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Բացարձակ

պինդ և առածական օղակներով մանիպուլյացիոն ռոբոտների շարժումների ղեկավարում և օպտիմիզացիա» թեմայով: 2002-2010թթ. եղել է Խ.Արուսյանի անվան ԳՊՀ ղեկավար: 2010-2013թթ. ղեկավարել է ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովը: 2013թ.-ից մինչև 2016թ. փետրվարի 10-ը եղել է ՀՀ ԳԱ կրթության ազգային ինստիտուտի տնօրենի տեղակալ: 1998-ից ՀՀ ԲՈՂ-ի 047 և 2012-ից 032 մասնագիտական խորհուրդների անդամ է: 2003-2010թթ. ղեկավարել է ՀՀ ԲՈՂ-ի 020 մասնագիտական խորհուրդը: ՀՀ ԳԱ «Մեխանիկա» գիտական հանդեսի և ԼՂՀ ԿԳՆ «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ է: 2010-ից ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի անդամ է, 2009-ից՝ ՀՀ հանրային խորհրդի

կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հանձնաժողովի նախագահ: 2009թ. շնորհվել է Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում: 2016թ. փետրվարի 11-ին նշանակվել է Գորիսի պետական համալսարանի ղեկավարի պաշտոնակատար: Համատեղությամբ աշխատում է ՀՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում առաջատար գիտաշխատող: Չեղիմակ է շուրջ 90 գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է տեսական մեխանիկա, մանիպուլյացիոն համակարգերի մեխանիկա և օպտիմալ ղեկավարում, ղեկավարման տեսություն, դասավանդման մեթոդիկա, կրթության կառավարման հիմնահարցեր: Նրա անմիջական ղեկավարությամբ ԵՊՀ-ում բացվել է «Մանիպուլյացիոն ռոբոտների մեխանիկա և ղեկավարում» մասնագիտացման համակարգը: Նրա համահայտագահությամբ 1997 և 2002թթ. երեսնամյա կազմակերպվել են «Օպտիմալ ղեկավարման, կայունության և մեխանիկական համակարգերի ամրության հարցերին» նվիրված միջազգային գիտաժողովներ: Ա. Ղուկասյանի ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական 7 ատենախոսություն: Մասնակցել է միջազգային գիտաժողովների աշխատանքներին (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կազան, Տաշքենդ, Օբսխորո, Չեչենյա), արժանացել հանրապետական և միջազգային բազում մրցանակների: Ամուսնացած է, ունի երկու զավակ, մեկ թոռ:

Ընտրական օրենսգրքի շուրջ չփարատված որեւէ կասկած չպետք է անլքես արվի

Ժողով (կարգավորումը) էջ 1 կշեզգոբացնի (կվերացնի, կցրի) մարդկանց կասկածանքն ու մտահոգությունը: Դատելով մամուլի հրապարակումներից, քաղաքական բանավեճերի ընթացքում հնչած ելույթներից, կարելի է առանձնացնել նմանատիպ մի քանի հարց. ա) քվեարկությանը մասնակցած անձանց կողմից ստորագրված ընտրացուցակների հրապարակում, բ) ընտրատեղամասերում տեսախցիկների տեղադրում և քվեարկության ու ձայների հաշվարկի ողջ ընթացքի «օնլայն» ռեժիմով հեռարձակում, գ) մատների թանաքուման մեխանիզմի ներդրում, դ) ընտրատարածքային ցուցակների մերժում, ե) ընտրական տեղամասերում լրագրողների թվի սահմանափակման խոչընդոտի վերացում: Ի դեպ, ներկայացված հարցերի լուծման համար խոչընդոտներ չի հարուցում մեր երկրի հիմնական օրենքը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը: Եվ ողջամիտ կլինեք, եթե մի կողմ թողնե՞ք ՀՀ սահմանադրական դատարանի կոնկրետ որոշման ու առավել կոնկրետ դրույթի շուրջ իրարանմերժ մեկնաբանությունները: Ողջամիտ կլինեք, որ աչքներս չպահե՞նք դեպի ճենաք աշխարհը և նրանց մեզ վրա դատավոր չկար-

գե՞նք, թեև վեներտիկ հանձնաժողովի, ԵԱԿԿ/ԺՅՄԻԳ-ի փորձագետներն առարկություն չունեն նշված հարցերի վերաբերյալ: Նաև չմոռանանք՝ Ընտրական օրենսգրքից է կախված լինելու 2017-ի ընտրական գործընթացի լեգիտիմությունը, ուրեմն եւ՝ ապագա իշխանությունների լեգիտիմությունը: Իսկ հայոց հողը ցուրդ սիրող, հայոց արժանապատվությունը հարգող, Հայաստանի վաղվա համար մտահոգ որեւէ մեկը չպետք է թույլ տա, որ հանրապետության իշխանություններն աշխարհաքաղաքական արձեցանք գարգացումների ու փոփոխությունների մեր օրերում ունենան խցելի լեգիտիմություն: Դրա համար հարկավոր է, նախեառաջ, վերացնել Ընտրական օրենսգրքին առնչվող ամենափոքր կասկածն անգամ: Այսինքն՝ քաղաքական ուժերի, հասարակության բոլոր խավերի դիտողությունները հաշվի առնելով ու «կոնսենսուս»-ի գալով՝ ինքներս լուծենք առկա հարցերը, որ մեկ տարի հետո կարողանանք մեր վստահությամբ, մեր հավատով գործություն բերենք հայրենի իշխանություններին: Սա այն կռիվն է, որի արդյունքում հաղթողներ ու պարտվողներ չպետք է լինեն: Սա այն կռիվն է, որի արդյունքում բոլորս պետք է հաղթող լինենք: **ՍԱՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**



Հանրապետության գյուղնախարարը՝ Սյունիքում

Աշխատանքային այցով մարտի 15-ին Սյունիք էր ժամանել ՀՀ գյուղնախարար Սերգո Կարապետյանը: Գորիսի ավագանու նիստերի դահլիճում ՀՀ գյուղնախարարը և Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը հանդիպում էին կազմակերպել գյուղական համայնքների ղեկավարներին հետ:

Նախարարը մասնակիցներին ներկայացրեց գյուղատնտեսության ոլորտում արված աշխատանքների մանրամասները, խոսեց հետագա անելիքների, ծրագրերի մասին: Նախարարն անդրադարձավ հիմնախնդիրներին: Համայնքապետներին հնարավորություն ընձեռվեց բարձրաձայնել իրենց հուզող հարցերը: Գյուղապետներին հիմնականում մտահոգում էին պարտաւնյութերի պահեստավորմանը, տեղական սերմացուներին, դաշտերի և արոտավայրերի ոռոգմանը, կոոպերատիվների հետագա աշխատանքներին, մարզում սպանդանոցների շահագործմանը և անասնապահության զարգացմանն առնչվող հարցերը:

Սերգո Կարապետյանը ոսկե մեդալով պարգևատրեց և շնորհակալագրեր հանձնեց մարզի գյուղատնտեսության ոլորտում աչքի ընկած անձանց: Նախարարը Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հետ այցելեց Գորիսի տարածաշրջանի համայնքներ:

ԱՐԵՎԻԿԱ ԱԲԵԼՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԹԱՆԳՅԱՆ. «Միակ խնդիրը գյուղացու վճարունակ չլինելը կարող է լինել»

ՊՅ ԻՄՅ ԿՅ ՕՅ Կ

Մարզում գարնանացանի աշխատանքներն արդեն մեկնարկել են, իսկ մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչությունը համակարգում է այդ աշխատանքները: Վարչության պետ Սամվել Թանգյանի տեղեկացմամբ՝ նախատեսվում է կատարել 4950 հա գարու, 95 հա ցորենի, 3800 հա այլ հացահատիկային մշակաբույսերի (հաճար, վարսակ) գարնանացան, ինչպես նաև 1200 հա բանջարեղենի, 1850 հա կարտոֆիլի ցանք:



«Թվային տվյալները ստույգ են՝ համապատասխանեցված համայնքապետարանների հետ, ընթացումն հնարավոր է 100 հա ավելանա կամ պակաս: Գարնանացանի սերմացու թե՛ գյուղացին ունի, թե՛ կառավարության աջակցության ծրագրերով ենք ձեռք բերել: Այս առումով մարզում խնդիր չկա», - նշեց Սամվել Թանգյանը:

Մարզին կառավարության գյուղատնտեսության աջակցության ծրագրով տրամադրվել է 307 տ գարու սերմացու, որ ձեռք բերելու համար նախապես համայնքապետերը հայտ են ներկայացնում, իսկ գյուղացին, կանխիկ վճարելով, ձեռք է բերում սերմացուն: Շուկայական գներից (1կգ՝ 170-180 դրամ), բնականաբար, տարբերվում է գարու սերմացուի 1կգ արժե 130 դրամ:

Գարնանացանի ցորենի, հաճարի սերմացու պետությունը չի տրամադրում, բայց մարզում պահեստավորված կա, եւ, վարչության պետի հավաստմամբ, խնդիր չունեն: Սամվել Թանգյանը հավաստիացրեց, որ սերմացուն բաժանվելիս գյուղապետը խտրություն չի դնում, նման խնդիր չի կարող առաջանալ, քանի որ եւ մարզպետը, եւ վարչությունը վերահսկում են աշխատանքները:

Պետությունը տրամադրել է նաև կորնզանի 40տ, 1կգ-ը՝ 370 դրամ, եւ առվույտի 3տ, 1կգ՝ 1500 դրամ, սերմացու: Կարտոֆիլի սերմացուի խնդիր նույնպես չկա, գյուղացիները, ֆերմերները պահեստավորված ունեն: Վարչության պետը նշեց նաև, որ անցյալ տարի որոշ ֆերմերներ էլիտա տեսակի կարտոֆիլ են ցանել և առաջին վերարտադրության սերմերն արդեն պահեստավորել են: Ի դեպ, կարտոֆիլի էլիտա տեսակը նորություն է մարզում, դրա գինը շուկայում հասնում է մինչև 550 դրամ, իսկ առաջին վերարտադրության սերմացուի գինը՝ 250 դրամ: Հարցին, թե արդյոք բանկ չէ կարտոֆիլի համար, վարչության պետը պատասխանեց. «Կարտոֆիլի գները մեր շուկայում անկանխատեսելի են»:

Անցյալ տարի մարզը դիզվառելիքի հայտ էր ներկայացրել 1 մլն 500 հազար լիտրի համար, բայց քանի որ շուկայում գները ցածր էին, օգտագործվել է ընդամենը 110 հազար լիտր: Այս տարի մարզին հատկացվել է 750 հազար լիտր՝ 1 և 270 դրամով: Նախապես կազմված ցուցակով այն տրամադրվելու է գյուղացուն՝ գումարը կանխիկ վճարելու դեպքում:

Մարզին հատկացված 2200 տ ազոտական պարարտանյութը նույնպես բավարար է գյուղացիներին, եթե լրացուցիչ պարարտանյութ ձեռք բերելու խնդիր լինի, կրկին հայտ կներկայացնեն: «Գարնանա-

ցանի համար թե՛ սերմացուի, թե՛ դիզվառելիքի, թե՛ պարարտանյութի հետ կապված խնդիր չունենք, իսկ տեխնիկան, թեպետ նոր չէ, բայց բավարար է գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար: Միակ խնդիրը գյուղացու վճարունակ չլինելը կարող է լինել: Իսկ ցրտահարությունն այս պահին վտանգավոր է միայն ծաղկած ծառերի համար», - ամփոփեց Սամվել Թանգյանը:

Վերջերս Սյունիք համայնքում կրծողները մեծ խնդիրներ էին առաջացրել: Սամվել Թանգյանը տեղեկացրեց, որ կրծողների դեմ աշնանային պայքար մարզի 27 համայնքում՝ Սիսիանի եւ Գորիսի տարածաշրջանների, կազմակերպվել էր, գարնանային պայքարի համար դեռեւս վաղ էր: «Քանի որ Սյունիք համայնքում կրծողները նախքան համապատասխան միջոցառումներ ձեռնարկելն ակտիվացան, անմիջապես ձեռնարկվեցին կանխարգելիչ աշխատանքներ: Ներկայումս կրծողներն այլևս վտանգ չեն սպառնում: Դեղամիջոցը տրամադրվում է պետպատվերի շրջանակներում համապատասխան խմբի կատարած ուսումնասիրությունների հիման վրա», - տեղեկացրեց վարչության պետը:

Դեղի որակի հետ կապված Սամվել Թանգյանը մտավախություն չունի, այն ներկրվում է արտասահմանից՝ անցնելով լաբորատոր հետազոտությունը:

Հաճախ կարելի է տարբեր համայնքների բնակիչներից բողոք լսել՝ կապված թունաքիմիկատների, համապատասխան դեղամիջոցների համար նախատեսված լիցենզավորված հատուկ վաճառքի կետ չունենալու վերաբերյալ: Վարչության պետը նշեց, որ Սիսիանում նման խանութ սեզոնային աշխատում է, իսկ մշտական գործունեության համար շահութաբեր չէ: «Մեր բնակիչների մեջ դեռեւս չի մտել բույսերի, կենդանիների հիվանդությունների դեմ նախօրոք պայքարելու համար որոշ միջոցառումներ ձեռնարկելու կուլտուրան», - պարզաբանեց Ս.Թանգյանը:

Խոսելով խոտ գյուղի մոտ կառուցված անասնաշուկայից՝ վարչության պետը նշեց, որ այն դեռեւս նպատակին չի ծառայում: Նույնիսկ առաջարկ է եղել այնտեղ դեղորայքի, գյուղտեխնիկայի մեծածախ առևտուր կազմակերպել, բայց քանի որ գյուղացիների կողմից ակտիվություն չի նկատվում, պահանջարկի պակաս կա, առայժմ քայլեր չեն ձեռնարկվում: «Իշխանասարի մոտ կառուցված գյուղմթերքների շուկան նույնպես չի ծառայում իր

Մարզի 2015թ. կապարած աշխատանքների ամփոփում

ՕՅ ԻՄՅ ԿՅ ՕՅ Կ

Մարտի 22-ին Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցավ մարզխորհրդի նիստ՝ նպատակ ունենալով ամփոփել 2015թ. կատարած աշխատանքները եւ ներկայացնելու 2016թ. անելիքները: Համայնքներում խմելու ջրի որակի եւ առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների մասին ներկայացրեց մարզպետարանի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գեորգյանը: Նա մասնավորապես ներկայացրեց 2015թ. երկրորդ կիսամյակում իրականացված մարզի բնակավայրերի ջրամատակարարման համակարգերում խմելու ջրի որակի մշտադիտարկման արդյունքները: Մանրաբանական հետազոտությունը ցույց է տվել, որ նախորդ կիսամյակի համեմատ արձանագրվել է շեղումների 4% մվազում: Շեղումներ արձանագրվել են հատկապես այն համայնքներում, որտեղ ջրամատակարարումը «Հայջրմուղ-Կոյուղի» ՓԲԸ-ն չի իրականացնում:

Սյունիքի մարզպետի 2015թ. գործունեության եւ մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին մանրամասն հաշվետվություն ներկայացրեց մարզպետի տեղակալ Հաչե Գրիգորյանը: Փոխմարզպետը ներկայացրեց պետական բյուջեով եւ միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների միջոցներով իրականացված ծրագրերը, սեփական եկամուտների հավաքումը, արդյունաբերական ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ծավալը, անցկացված տարաբնույթ միջոցառումները եւ այլն: 2015թ. մարզում որպես գերակա խնդիր շարունակում են մնալ զբաղվածության, նոր աշխատատեղերի ստեղծման եւ բնակչության բարեկեցության աճի ապահովման խնդիրները:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի եւ խնդիրների մասին խոսեց գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը: Նա ներկայացրեց մարզին հատկացված գարնանացանի սերմացուի, պարարտանյութերի,

դիզվառելիքի թվային տվյալները եւ հավելեց, որ աշխատանքներն ընթանում են բնականոն հունով, եւ այս պահին լուրջ խնդիրներ չկան: Մարզի 2014-17թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման եւ 2016թ. անելիքների մասին ներկայացրեց մարզպետարանի զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժնի պետ Էդգար Մարտիրոսյանը: Նա տեղեկացրեց, որ 2016թ. համար նախատեսված է մարզին հատկացնել 20.84 մլրդ դրամ, որից՝ պետական բյուջեից՝ 4.1 մլրդ, միջազգային կազմակերպություններից՝ 13.3 մլրդ, համայնքային բյուջեների ֆոնդային մասից՝ մոտ 153 մլն, մասնավոր ներդրումներից՝ 8.2 մլրդ դրամ, այլ աղբյուրներից՝ 3.7 մլն դրամ:

Քաղաքաշինության վարչության պետ Ռազմիկ Ավետիսյանը ներկայացրեց Կապանի տարածաշրջանի 22 համայնքում կատարված խմելու ջրի ջրագծի, կապատմերի արտաքին եւ ներքին պատերի, ջրամբարների ներկայիս վիճակի մասին տեղեկատվություն: Հիմնական բացթողումներն են՝ կապատմերը չցանկապատելը, ներքին եւ արտաքին ջրագծերի խողովակների մաշվածությունը, ջրամբարների ջրամեկուսացման խախտումը: Որոշ բացթողումների համար բավական մեծ գումարներ անհրաժեշտ չեն, եւ կարելի է համայնքի միջոցներով դրանք վերացնել:

Կապանի, Գորիսի եւ Ագարակի քաղաքապետները հաշվետվություն ներկայացրին 2015թ. կատարած աշխատանքների եւ հետագա անելիքների մասին: Գորայքի գյուղապետը նշեց, որ, չնայած կատարված մեծածավալ աշխատանքներին, համայնքում լուծում պահանջող խնդիրներ կան:

Մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ամփոփելով մարզխորհրդի նիստը, նշեց, որ մարզի 2015թ. կատարած աշխատանքները բարձր են գնահատվել իշխանությունների կողմից, եւ 2016թ. պիտի շարունակվել նույն ոգով աշխատել:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրություն (11 դասաժամ), ինֆորմատիկա (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծեւ 1), 2. Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ, 3. Անձնագրի պատճենը, 4. Ինքնակենսագրություն (ծեւ 4), 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացնող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում), 6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի, 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք, 8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև ապրիլի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա ապրիլի 21-ին՝ ժամը 12:00-ին, Սյունիքի մարզի Կապանի N10 միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ /0285-2-55-92/ հեռախոսահամարով:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆ. «Միայն լսարանում դասապրոցես կազմակերպելով համալսարանական միջավայր չես ստեղծի»

միջավայր է, որը միանգամից ամբողջովին բացահայտել հնարավոր չէ, բայց այդ ճանապարհին ենք: Տարբեր ժողովների, միստերի ընթացքում փորձում ենք հասկանալ խնդիրները, լուծման ուղիներ փնտրել: Իհարկե, խնդիրները շատ են ու տարբեր բնույթի՝ մասնագիտականից մինչև ֆինանսական:

– Արդեն նշանակվել է ռեկտորի ընտրության օրը:

– Կառավարման խորհրդի անդրամիջին միստի ընթացքում հաստատվեց կառավարման խորհրդի կազմը՝ մարզպետ Սուրեն Խաչատրյանի նախագահությամբ, ինչպես նաև ամփոփվեց բուհի 2015թ. գործունեությունը: Առաջիկա միստում կհաստատվի ռեկտորի ընտրության կարգը, որից հետո կդիմենք լիազոր պետական մարմին՝ ընտրության օրը սահմանված կարգով նշանակելու համար:

– Համալսարանի ռեկտորի պաշտոնակատար նշանակվելուց հետո ի՞նչ ժառանգություն ստացաք հատկապես Սյունիքի տարածաշրջանում ավանդույթներ ունեցող համալսարանից:

– Չեմ ուզում գնահատականներ տալ, բայց հարուստ ժառանգություն չեմ ստացել: Բուհի բոլոր օղակներում կան խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Եթե ընդհանրացնեն, կարող եմ ասել, որ վերջին շրջանում բուհում տիրող անտարբեր վիճակն իր հետքն է թողել բոլոր օղակների վրա: Բայց դրանք ժամանակավոր երեւոյթներ են. հիմնականում առողջ մթնոլորտ է տիրում, հուսով եմ, խնդիրները հնարավորինս կլուծվեն:

– Հատկապես Գորիսում Ձեր ղեկավարման առաջին տարվանում արդյունքներ ապահովեցի, որ բավականին խստապահանջ եք. նույնիսկ ստուգումներ եք անցկացրել...

– Ինձ թվում է՝ արտառոց ոչինչ չկա հատկապես ստուգումներ իրականացնելու մեջ: Ղեկավարը փոխվում է, բնական է, որ իրավիճակին ծանոթանալու համար պիտի ստուգումներ կատարվեն: Հիմնականում 2015թ. գործունեությունն եմ ուսումնասիրել, որոշ դիտողություններ կատարել. այդ օրերին ծավալված քննարկումները պարզապես անհրաժեշտություն էին:

– Ինչպիսի՞ քաղաքականություն եք որդեգրել կադրերի հարցում:

– Կարգերի հետ պիտի զգույշ վարվել, որովհետև գործ ունես մարդկային ճակատագրերի հետ: Բուհում մի խնդիր կա, որ առաջանա հերթ լուծում է պահանջում՝ բուհի ընդհանուր ծանրա-

բեռնվածություն-կարգերի քանակ համամասնությունը: Խոսքը դասախոսների գիտական, մանկավարժական գործունեության մասին չէ. սա առանձին քննարկման առարկա է: Այստեղ նրանց կատարած աշխատանքի ծավալի եւ կարգերի քանակի անհամաչափության խնդիրն է: Մեր ֆինանսական սուղ պայմաններում ստեղծված իրավիճակը, մեղմ ասած, անբույլատրելի է: Նախքան որեւէ քայլ կատարելու պիտի հաշվի առնենք ամեն մասնուրուք, որպեսզի մարդիկ խուճապի չմատնվեն: Շատ լուրջ աշխատանք կկատարենք դասախոսների գիտական կոչումների, աստիճանների բարձրացման ուղղությամբ՝ հատկապես երիտասարդներին խրախուսելով:

– Երկար տարիներ ղեկավարել եք հանրապետության ամենաճանաչված բուհերից մեկը՝ մանկավարժական համալսարանը: Արդյո՞ք տարբերությունն ակնհայտ է մայրաքաղաքային եւ մարզային բուհերի միջև:

– Ամեն ինչով հանդերձ՝ գորիսեցին պիտի հպարտանա, որ սովորում է ԳՊՀ-ում: Սա կարելու հանգամանք է: Եթե ուսանողն իր բուհի կարեւորությունը չտեսնի, դժվար կլինի հետագա ուսումնառությունը կազմակերպել: Բնական է, մայրաքաղաքային բուհերի գիտակրթական, ուսանողական միջավայրից զգալիորեն տարբերվում է. առաջին տարվանում քանակը հարուստ ժառանգություն է ապահովել պիտի կյանքն աշխուժացնել բոլոր առումներով: Համալսարանը միայն գրատախտակը, երկու-երեք ժամ տեսողությամբ դասապրոցես չէ. սա գործող մարմին է, որը մշտապես պիտի լինի մարզի ուշադրության կենտրոնում՝ իր միջոցառումներով, ժողովրդի սպասելիքների արդարացումով, դասախոսների ձեռքբերումներով: Ուսումնասիրելով բուհի մասնագիտությունների ցանկը՝ տպավորություն է ստեղծվում, որ հաստատությունը մարզի սոցիալ-տնտեսական կարիքները չի արտացոլում: Մենք ինչ-որ իմաստով կտրվել ենք այն պահանջներից, որ մարզն ունի: Միայն լսարանում դասապրոցես կազմակերպելով համալսարանական միջավայր չես ստեղծի:

Բուհի գիտական, կրթական, մշակութային միջավայրը պիտի ազդի շուկայի վրա, ձեւավորի այն, թեւորի իր պահանջները: Այսօր, ցավոք սրտի, պիտի արձանագրենք, որ բուն դասապրոցեսի ավարտից հետո սպառվում է նաեւ բուհական միջավայրը, այնինչ այն պիտի նոր թափ առնի: Բուն դասապրոցեսից հետո պիտի կազմակերպվեն քննարկումներ, սեմինարներ, կատարվեն հետազոտություններ, գործեն տարբեր

ակումբներ:
– Այլ բուհերից դասախոսներ հրավիրելը կարելի՞ է դիտարկել որպես բուհական միջավայրն ակտիվացնող ուղիներից մեկը:

– Դեռեւս խորհրդային տարիներին այս բուհ են հրավիրվել շատ նշանավոր գիտնականներ, եւ այդ առումով ավանդույթներ էին ձեւավորվել: Սա, իհարկե, բուհական կյանքն ակտիվացնող ուղիներից է, բայց միակը չէ: Բուհն իր գոյության համար պիտի սեփական մասնագետներն ունենա, իսկ նեղ մասնագիտական դասընթացների համար կարելի է հրավիրել նաեւ այլ մասնագետների՝ հարուստ փորձի փոխանակման եւ ամհրաժեշտ գիտելիքների ձեռքբերման համար: Խորհրդային տարիներից հետո հանրակացարանները, քոթեջները վերացվել են, որը նույնպես դժվարություններ է ստեղծում դասախոսներ հրավիրելու համար: Բայց այսօր ունենք այն, ինչ ունենք, եւ ռեալ պատկերը հաշվի առնելով՝ պիտի որոշենք մեր հետագա անելիքները: Ամենակարեւորն այն է, որ ժամանակին համահունչ քայլես՝ հատկապես հարստացնելով մասնագիտությունների ցանկը:

– Գուք նշեցիք, որ մարզային բուհը պիտի աշխատի նախեւառաջ մարզի պահանջները բավարարելու ուղղությամբ: Արդյո՞ք այսօր Գորիսի պետական համալսարանը թերահուն է այդ հարցում:

– Եթե դիտարկենք մարզն ու համալսարանի խնդիրները, ապա կնկատենք ակնհայտ տարբերություն, այնինչ իրականում պիտի այդպես չլինի: Յուրաքանչյուր մարզային համալսարանն արժեքավոր պիտի մարզի կարիքները բավարարի: Առաջնահերթ մենք պիտի պատրաստենք մանկավարժական կադրեր, բայց այդ հարցում նույնպես թերահուն ենք: Ընդամենը 5-6 մանկավարժական մասնագիտության գծով ենք կրթություն իրականացնում: Օրինակ, որտե՞ղ պիտի պատրաստվեն մարզի դպրոցների համար աշխարհագրության ուսուցիչներ: Մյուս կողմից էլ ֆինանսական խնդրի առաջ ենք կանգնում. բացելով տվյալ մասնագիտությունը՝ մենք ունենում ենք թերբեռնված խմբեր: Բուհը պահելու համար յուրաքանչյուր մասնագիտության համար առնվազն պիտի 20-25 դիմորդ լինի խմբում, որը մենք չենք ունենում: Առանց պետպատվերի ավելացման հնարավոր չէ ֆակուլտետ պահել:

– Ամբողջ տարվա կտրվածքով բուհին հատկացվում է ընդամենը 17-18 պետպատվերով տեղ: Համալսարանը միայն պիտի ապահովի մասնագիտությունների լայն ցանկ, այլ կայրերից ուսանողներով համալրվի եւ մասնագետներ պատրաստի հանրապետության ողջ տարածքի համար: Եթե ամեն տարածաշրջանում տեղակայված բուհ պատրաստի մասնագետներ միայն այդ տարածաշրջանի համար, երկար գոյատևել չի կարողանա:

Խնդիրը զրբալ առումով պիտի լուծվի. մարզային բուհը պիտի լուծի նաեւ համապետական խնդիրներ: Բուհը գրավիչ է, նախեւառաջ, իր կադրերով, գիտակրթական, մշակութային, մանկավարժական միջավայրով, այսինքն՝ մայրաքաղաքային եւ մարզային բուհերի մակարդակները պիտի հավասար լինեն: Եթե մենք խոսում ենք եվրոպական կրթական ստանդարտների, Բոլոնիայի գոր-

ծընթացի մասին, ապա պիտի աստիճանաբար դրա մասնիկը դառնանք: Ի՞նչ տարբերություն, թե մաթեմատիկայի ուսուցիչ որտեղ կատարաստես: Խնդիրը բոլոր տեղերում մասնագիտական դաշտ ստեղծելն է, կրթական նվազագույն պահանջները բավարարելը:

– Նորանշանակ ԿԳ Նախարար Լեւոն Մկրտչյանի հետ խորհրդակցություններում պիտի անդրադառնալ հատկապես միջբուհական համագործակցությանը ակտիվացնանը, ուսանողների փոխանակմանը:

Կրեդիտային համակարգի ներդրումն ակնկալում է այլ բուհերում մասնակցած դասընթացների արդյունքում հավաքած կրեդիտների փոխանցումն այն հաստատություն, որտեղ ընդունվել ես: Այստեղ մեկ վայրից կառուցելու խնդիր չպիտի դրվի, բայց այս գործընթացը դեռեւս մեր բուհական համակարգ լիարժեք մուտք չի գործել: Նախքան ուսանողների մակարդակին հասնելն անբիղնների համագործակցությունը պիտի ակտիվացնել: Բուհի ամենակարեւոր օղակն անբիղնն է՝ իր մանկավարժական կարգերով եւ գիտական մակարդակով: Ռեկտորատի խնդիրը համապատասխան միջավայր ստեղծելն է, անբիղների առաջադրած խնդիրները լուծելը: Եռաստիճան բուհական համակարգը պիտի ծառայի իր նպատակին, որ ենթադրում է մրցակցային դաշտ բոլոր օղակներում:

– Համարձակվում ենք արձանագրել, որ գիտական միտքն այստեղ այնքան էլ չի խրախուսվում, ավելի կոնկրետ՝ ստվերում էր մնում:

– Բուհում կան գիտնականներ, ովքեր իսկապես իրենց գործի նվիրյալներն են, ու նաեւ նրանցով է պայմանավորվում գիտական մթնոլորտը: Հնարավորինս մեծ ուշադրություն պիտի դարձնել այդ կադրերի գործունեությանը, որովհետեւ նրանք են վաղվա մասնագետին կերտողները: Շուկայական այս հարաբերություններում, ցավոք, նրանք դուրս են մնացել ուշադրությունից, բայց անբիղնների զարգացման համար ֆինանսական միջոցներ հայթայթելու ծրագրեր կան: Պետությունը գիտական աշխատանքների կազմակերպման համար ֆինանսավորում չի հատկացնում, բայց ՀՀ ԿԳԳ հիտության պետական կոմիտեն գիտական հայտեր պիտի ուղարկենք՝ հույս ունենալով դրանց շահելու դեպքում լրացուցիչ ֆինանսավորում ստանալ: Բուհի ֆինանսական ներկայիս վիճակը հնարավորություն չի տալիս զարգացման ծրագրեր կազմել, լրացուցիչ միջոցներ հատկացնել այդ մարդկանց աշխատանքների համար: Եթե հաստատության բյուջեի 60%-ից ավելին ծախսվում է աշխատավարձի ֆոնդի վրա, նշանակում է՝ այն գոյատևում է միայն այսօրվա համար եւ հեռանկարային պլաններ մշակել չի կարող: Ստեղծված իրավիճակում միակ էլքը մնում է տարբեր տեղերից միջոցներ հայթայթել, այս դեպքում գիտության պետական կոմիտեն թե՛ բազային, թե՛ թեմատիկ ֆինանսավորման հնարավորություններ է տալիս, պարզապես պիտի աշխատել այդ ուղղությամբ: Թեմատիկ ֆինանսավորման հասնելն ավելի բարդ է, իսկ բազայինով հնարավոր է գոնե լաբորատոր աշխատանքների համար լրացուցիչ ֆինանսավորում ստանալ: Գիտական աստիճան ունենալու դեպքում պետության կողմից հավելավճար ստանում ես միայն այն դեպքում, եթե ընդգրկված ես որեւէ գիտական թեմայում: ԳՊՀ-ում գիտության պե-

տական կոմիտեի կողմից ֆինանսավորվում է հայագիտական հետազոտությունների կենտրոնը, բայց բնագիտական գիտությունների ուղղությամբ բավականաչափ աշխատանք կա կատարելու: Առաջիկա մեր խնդիրներից է լինելու 2017թ. համար գիտական հայտեր ներկայացնելը. տասը թեմա ներկայացնենք, թող երկուսն ընդունվի: Ամբողջ աշխարհում ընդունված պրակտիկա է. պարտադիր չէ, որ բոլոր թեմաներն ընդունվեն, բայց անընդհատ մասնակցելն անհրաժեշտություն է:

– Բուհերում պետպատվերով տեղերի թիվը նվազել է: Արդյո՞ք այս երեւոյթը լրացուցիչ խնդիրներ չի ստեղծում:

– Պետպատվերով տեղերի նվազումը ողջ հանրապետության բուհերին է բնորոշ: Պետությունն ավելի շատ գնում է դեպի վճարովի համակարգի խրախուսում՝ իր սուղ պայմաններն օգտագործելով երկրի համար ավելի կարելու հարցերի լուծման համար: Մեր բուհի մասնագիտությունների ուսման վճարները զգալիորեն տարբերվում են մայրաքաղաքային բուհի նույն մասնագիտությունների վճարներից: Բուհն է սահմանում չափը՝ հաշվի առնելով տվյալ տարածաշրջանի բնակչության սոցիալական մակարդակը: Կան մասնագիտություններ, որոնց պատրաստման համար քիչ ծախս է պահանջվում, բայց վճարը բարձր է, օրինակ՝ իրավաբանությունը, իսկ մեկ քիմիայի մասնագետ պատրաստելու համար տասը անգամ ավելի շատ գումար է պետք: Ես կարծում եմ, որ գրավիչ մասնագիտություններից փոխանցվող գումարը կարող է լրացուցիչ միջոց լինել այլ մասնագիտությունների զարգացման համար: Նորից եմ կրկնում՝ մեր առաջնահերթ խնդիրը մասնագիտությունների ցանկի վերանայումն է:

– Ի՞նչ մասնագիտությունների գծով է իրականացվում բակալավիդատի եւ մագիստրատուրայի կրթությունը ԳՊՀ-ում:

– Բակալավիդատում կրթությունն իրականացնում ենք հետևյալ մասնագիտությունների գծով՝ մաթեմատիկա, կենսաբանություն, դեղագործական քիմիա, պատմություն, իրավագիտություն, հայոց լեզու եւ գրականություն, մանկավարժություն եւ մեթոդիկա, տնտեսագիտության տեսություններն ու կառավարում, էլեկտրաէներգետիկա, էլեկտրոնային տեխնիկա, ֆիզիկա, իսկ մագիստրատուրայում՝ ինը մասնագիտությունների գծով՝ մաթեմատիկա, կենսաբանություն, պատմություն, հայոց լեզու եւ գրականություն, մանկավարժություն եւ մեթոդիկա, տնտեսագիտության տեսություն, ՀՊԳՀ կիբեռնետիկայի ֆակուլտետ, իրավագիտություն, քիմիա: Ասպիրանտական կրթություն իրականացնելու հեռահար պլաններ էլ ունենք:

– Ինչպես արդեն նշեցի, եռաստիճան կրթական համակարգը պիտի ծառայի իր նպատակին: Բակալավիդատից հետո մագիստրոսական ծրագրերը նեղ մասնագիտական են՝ միտված գիտահետազոտական աշխատանքների զարգացմանը. այլ հարց է, թե որքանով է այն իրագործվում մեր բուհական համակարգում: Մագիստրատուրայի դիմորդը չպիտի այն գիտակցություն ունենա, որ սա ուղղակի ուսումնական գործընթացի շարունակությունն է, այն



ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԻՍԻ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑԻՑ

Քաջարան քաղաքում մարտի 3-8-ը անցկացվեց Սյունիքի մարզի պատանիների 10-րդ շախմատի առաջնությունը: Երեք տարիքային խմբերից երկուսում չեմպիոնի կոչումը նվաճեցին Գորիսի «Ա. Օրոյանի անվան շախմատի դպրոցի» սաները:



Աշոտ Բաղդասարյան



Արշակ Բախչատյան

Մինչև տասը տարեկանների խմբում, շվեյցարական մրցակարգով անցկացված մրցաշարում յոթ հնարավորից վաստակելով 5,5 միավոր, մեր պատանի շախմատիստ Արշակ Բախչատյանը նվաճեց իր տարիքային խմբի Սյունիքի մարզի չեմպիոնի կոչումը: Գործակիցներով զիջելով առաջատարին՝ նույնքան միավորով մեր պատանի շախմատիստներից Նիկոլայ Գալստյանը գրավեց 2-րդ պատվավոր տեղը: Մեր երկու մրցանակակիրներն էլ Հայաստանի պատանիների շախմատի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին մասնակցելու ուղեգիր ձեռք բերեցին:

մարզի պատանի շախմատիստների չեմպիոնի կոչումը նվաճեց Աշոտ Բաղդասարյանը: Այդ տարիքային խմբում 2-րդ պատվավոր տեղը գրավեց Գորիսի տարածաշրջանի Քարահունջ գյուղի պատանի Դավիթ հաննես Բաղդասարյանը: Այս տարիքային խմբի Հայաստանի պատանիների շախմատի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին մասնակցելու միակ ուղեգիրը բաժին հասավ Աշոտ Բաղդասարյանին: Մինչև տասներկու տարեկան-

առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին մասնակցելու ուղեգրերից մեկը՝ զբաղեցնելով 4-րդ հորիզոնականը: Այդ տարիքային խմբում մեր պատանիներից բավականին հաջող հանդես եկած Վահե Մուսայելյանը, ով առաջին հինգ տուրից հետո առաջատար էր, վերջին երկու տուրում կրած պարտություններից հետո հանգրվանեց 5-րդ հորիզոնականում եւ գրկվեց կիսաեզրափակիչի բաղձակի ուղեգրից:

ՏԻՂՈՒՄ ԳՐԻՎՈՐԱՆ

ՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ

Վերջապես Մեղրին էլ ունեցավ նորակառույց իր բժշկական կենտրոնը՝ հագեցած ժամանակակից բժշկական սարքավորումներով: Մեղրի-Ագարակ-Նումանոր ձգվող ճանապարհների ճանապարհների հարակից տարածքում կառուցվեց գեղեցիկ տեսքով հիվանդանոց, որի կարիքը շատ էր զգուս Մեղրու ենթաշրջանի բնակչությանը, այն պարզապես կենսական անհրաժեշտություն էր:

Վերջերս մենք առողջական խնդրի պատճառով բուժման հնարավորություն ունեցանք հիվանդանոցում: Շնորհակալություն ենք հայտնում հիվանդանոցի տնօրեն Լուսինե Վարդանյանին՝ մեր ընտանիքի սոցիալական վիճակը հաշվի առնելու համար, խորին երախտագիտությունը՝ բուժող բժիշկ Մեիր Աբրահամյանին, ով բուժող անձնակազմին: Մեզ դիմավորեցին հուսադրող խոսքերով եւ դուրս գրեցին հիվանդանոցից ջերմ ժպիտներով: Իսկ հիվանդանոցային հարմարավետ պայմանների համար պարզապես խոսք չկա ասելու:

Ներսես Աղաբեկյան, Գոհար Թորոսյան, Մեղրի, գ. Լեհվազ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (10 ժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե 1),
- Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
- Անձնագրի պատճենը,
- Ինքնակենսագրություն (ծե 4),
- Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային

ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

- Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ապրիլի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 21-ին՝ ժամը 12:00-ին, Սյունիքի մարզի Կապանի N6 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Կապան, Մուշեղ Հարությունյան 5ա:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 2-37-83 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի, ֆիզկուլտուրայի ուսուցիչների թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 1-ի) եւ բանավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 2-ի):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե 1),
- Բարձրագույն կրթության մասնավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) կամ վերջին տասը տարվա ընթացքում մասնավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
- Անձնագրի պատճենը,
- Ինքնակենսագրություն (ծե 4),
- Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
- Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2016թ. ապրիլի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-14:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2016թ. ապրիլի 21-ին, ժամը 14:00-ին Սյունիքի մարզի Հր. Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բարաբաթում թաղ., 2/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)61-22-90 կամ (0285)2-47-90 հեռախոսահամարներով:

ՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ

Վերջերս մթազնել էր ձախ աչքս, որի պատճառով դիմեցի ակնաբույժ ժամնա Սարգսյանին: Նրա հմուտ ձեռքերով ենթարկվեցի վիրահատության, ինչի շնորհիվ տեսողությունս վերականգնվեց: Երախտագիտություն եմ հայտնում իրաջբ գործող բժշկուհուն, բուժքույրեր Իրմային եւ Ջոյային, վիրահատության նախապատրաստությանը աջակցած բուժաշխատողներին: Շնորհակալություն ձեզ, հարգելի բժիշկներ եւ բուժաշխատողներ, անուր առողջություն ձեզ եւ երկար կյանք:

ԷՄԻՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ք. Կապան

ՀԱՂՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում է գտնվում թիվ ՍՂ2/0461/02/15 քաղաքացիական գործն՝ ըստ Երանուհի Վարազդատի Հովսեփյանի ներկայացուցիչ Լիանա Գրիգորյանի դիմումի՝ «Քաղաքացի Վարազդատ Վահանի Հովսեփյանին անհայտ բացակայող ճանաչելու» պահանջի մասին:

Սնդրվում է բոլոր քաղաքացիներին եւ կազմակերպություններին՝ Վարազդատ Վահանի Հովսեփյանի (ծնված 09.05.1972 թվական, հաշվառման հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, Գորայք, Գ.Կարապետյան փողոց թիվ 5 շենք, բնակարան 1, անձնագիր AK0264903, տրված 11.03.2009 թվականին, 051-ի կողմից, վերջին հայտնի բնակության վայրը՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Սպանդարյան փողոցի թիվ 1ա շենք, բնակարան 53) վերաբերյալ հայտնի տեղեկությունները տրամադրել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (ք. Մեղրի, Ջրավար Անդրանիկի փողոցի թիվ 24/1 հասցեում) կամ զանգահարել 0286-4-22-92 հեռախոսահամարով:

Դատավոր՝ Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՎԱՏԱՌՎՈՒՄ Է մեկ սենյականոց բնակարան Քաջարան քաղաքի Խանջյան փողոցի չորս հարկանի շենքի 3-րդ հարկում: Ցանկացողները զանգահարեն 091 98 40 95 հեռախոսահամարով:

ՎԱՏԱՌՎՈՒՄ Է 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք. Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալիյան նախագիծ, գազի ֆիկացված է, վիճակը՝ բարվոր: Ձանգահարել՝ (094) 766 425:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Աշտարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (19,25 ժամ) եւ ինֆորմատիկայի (9,25 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր, ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե 1),
- Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
- Անձնագրի պատճենը,
- Ինքնակենսագրություն (ծե 4),

- Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
- Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ ապրիլի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Աշտարակի միջնակարգ» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 25-ին՝ ժամը 12:00-ին, «Աշտարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 58 58 48 հեռախոսահամարով:

Այունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՎԻՉ
«ՅՈՒՆԵՍԿՕ ԱՆԿԱՐԳ»
ՍԱՀՄԱՍԹԱՎ ՊՏՏԱՍՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԻՏ ԱՆՔՆԱՅԱՆ

Հասցե՝	Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝	(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
Էլ. փոստ՝	syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝	www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ՇԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Ⓒ Ձեռնիկ տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Պետական քաղաքացիական տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1725, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 22.03.2016թ.: